ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԳԻՐԳԻԴՅԱՆԻ

Սույն թվի հոկտեմբերի 29-ին Թբիլիսիում վախճանվեց լուսահոգի տեր Հովհաննես ավագ քահանա Գիրգիդյանը։



Տեր Հովհաննեսը ծնվել է Թբիլիսիում 1880 թվին, քահանայի ընտանիքում։ Ջիգրաշենի ծխական դպրոցը ավարտելուց հետո, նա մտել է Ներսիսյան դպրոցը, որտեղից դուրս է եկել լրիվ դասընթացը շավարտած, աչքերի տկարության պատճառով։ Բժշկվելուց հետո, հոր խորհրդով, մտել է Ս. Գեորգ եկեղեցին դպիրի պաշտոնով։ 1913 թվին ձեռնադրվել է քահանա Մեսրոպ Մագիստրոս եպիսկոպոսի ձեռքով Կոդա գյուղի վրա։ 1914 թվին տեր Հովհաննեսը նշանակվել է Մանգլիսի դինվորական քահանա և շրջակա գյուղերի հոգևոր հովիվ։ 1919 թվին նա նշանակվել է Շվինտիսի և կից գյուղերի ծխատեր քահանա, ուր մնաց՝ մինչև իր կյանքի վերջը։

Տեր Հովհաննեսը աչքի է ընկել շինարարական աշխատանքներով. նա Թոնեթ գյուղում կառուցել է նոր եկեղեցի, վերանորոգել է ներսից և դրսից Մանգլիսի ու Փոքր Թոնեթի եկեղեցիները, նորոգել է Շվինտիսի երկու եկեղեցիները, կառուցել է ուխտավորների համար սենյակներ և այլն։

Իր 50-ամյա գործունեության շրջանում, շնորհիվ իր անբասիր վարք ու բարքի, տեր Հովհաննեսը միշտ սիրված և հարգված է եղել իր ժողովրդից։ Նրա հուղարկավորության եկել էին մասնակցելու ո՛չ միայն նրա հազարավոր հավատացյալները, այլև դրացի գյուղերից նրան ճանաչող վրացի հարյուրավոր հավատացյալներ։

Տերը լուսավորե նրա հոգին և արդարոց դասուն արժանի անե։